DOI: 10.61760/18290108-ega.25.2-111

ԱՖՂԱՆՍՏԱՆՈՒՄ ԽՍՀՄ ԵՎ ԱՄՆ-Ի ՎԱՐԱԾ ՏԵՂԵԿՈՒԹԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ*

Ն. Բ. ԵՆԻԿՈԼՈՊՈՎԱ, պահեստազորի մայոր, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ռազմարվեստի պատմության հետազոտությունների կենտրոնի գիտնական-վերլուծաբան, Ռ. Հ. ԳԱՍՊԱՐՅԱՆ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ռազմարվեստի պատմության հետազոտությունների կենտրոնի գիտնական-վերլուծաբան

Ներածություն

21-րդ դարում, պայմանավորված տեխնոլոգիաների զարգացմամբ, համընդհանրացմամբ, աշխարհի աճող կապակցվածությամբ, տեղեկատվական հոսքերի մեծացմամբ ու արագացմամբ և զանգվածային հաղորդակցության նոր միջոցների ստեղծմամբ ու եղանակների կիրառմամբ, տեղեկույթը դարձել է ոչ միայն ռեսուրս, այլև հզոր զենք, ինչն էականորեն փոխել է հակամարտությունների բնույթը՝ դրանք գերազանցապես տեղափոխելով տեղեկատվահոգեբանական հարթություն[1]: Համաշխարհային ու տարածաշրջանային տերությունները, ոչ պետական դերակատարները ռազմական ու քաղաքական նպատակներին հասնելու համար հաճախ դիմում են պատերազմավարման ոչ ավանդական մեթոդների, որոնք նպատակաուղղված են հակառակորդի ներքին սոցիալ-քաղաքական կայունության խաթարմանը, մասնավորապես՝ բնակչության բարոյահոգեբանական վիճակի վրա ազդմամբ:

Ժամանակակից պատերազմների բնույթի փոփոխականությունը առաջ է բերում անվտանգության ապահովման նկատմամբ ավանդական մոտեցումների վերանայման անհրաժեշտություն, քանի որ ֆիզիկական տարածքի համար մղվող մարտերը տեղը «զիջում են» մարդկանց մտքին տիրելու համար մղվող մարտերին, որտեղ հաղթանակը պայմանավորվում է ոչ թե սպառազինության քանակով, այլ տեղեկույթն օգտագործելու և զանգվածների զգացմունքներն արդյունավետ կերպով կառավարելու կարողությամբ[2]: Այս համա-

* Հոդվածն ստացվել է 10.02.2025: Հոդվածի գրախոսությունն ստացվել է 24.06.2025:

[1] Տես *П. К. Логинов.* Информационно-психологическое воздействие в современных операциях. «Военная мысль», 2022, № 5:

[2] Տես *А. Н. Медушевский.* Когнитивная война: социальный контроль, управление сознанием и инструмент глобального доминирования. Часть 1. «Вопросы теоретической экономики», 2023, № 2 (https://cyberleninka.ru/article/n/kognitivnaya-voyna-

տեքստում հոգեբանական պատերազմի* ուսումնասիրությունը ներկայացնում է ոչ միայն գիտական հետաքրքրություն, այլև անհրաժեշտություն է ՀՀ ԶՈՒ-ի շինարարության և ազգային անվտանգության ռազմավարության մշակման տեսանկյունից: Դրանով հնարավորություն կընձեռվի ավելի հստակ կերպով պատկերացնելու տեղեկութահոգեբանական պատերազմի սպառնալիքները, ինչպես նաև հավանական պատերազմում հակառակորդի տեղեկատվական ազդեցության չեզոքացման գործիքներն ու մեխանիզմները, զինված ուժերի ու հասարակության փոխգործության ամրապնդման մեթոդները, զինծառայողների հոգեբանական դիմադրողականության մեծացման ուղիները և այլն:

Տեղեկութահոգեբանական պատերազմը, կամ պայքարը, սկսվում է ռազմական գործողություններից շատ ավելի վաղ ու շարունակվում դրանց ընթացքում և, անգամ, ավարտից հետո: Դրա հիմնական խնդիրն է հակառակորդին պարտադրել իր կամքը՝ ազդելով նրա վրա բնակչության ու զինված ուժերի անձնակազմի գիտակցությունը վերահսկելու և այն ձեռնածությունների ենթարկելու նպատակով: Հարկ է նշել, որ հոգեբանական պատերազմը դարեր շարունակ օգտագործվել է որպես ռազմական նպատակներին հասնելու ոչ բռնի միջոց: Թեև հոգեբանական պատերազմի՝ որպես պատերազմավարության առանձին եղանակի ուսումնասիրությունը ձևավորվել է միայն 20-րդ դարի երկրորդ կեսին, սակայն դեռ մ. թ. ա. 5-րդ դարում չինացի ռազմական տեսաբան Սուն Ցզին իր «Երկ ռազմարվեստի մասին» աշխատությունում խոսել է դրա կարևորության մասին: Նա շեշտել է. «Լավագույնից լավագույնն այն է, որպեսզի հնազանդեցնել հակառակորդի բանակն առանց մարտի»[3]: Նրա ռազմավարական մտածողության հիմքում այն գաղափարն է, որ հաղթանակի հասնելու համար պարտադիր չէ դիմել ուղղակի ռազմական գործողությունների, այլ կարելի է կիրառել այլընտրանքային եղանակներ՝ հակառակորդի բարոյական ոգու, կառավարման համակարգի և սոցիալական կայունության թուլացման միջոցով: Նրա կարծիքով՝ անհրաժեշտ է հակառակորդի ճամբարում ամեն լավ բան փչացնել և կաշառելու միջոցով հանցավոր գործունեության մեջ ներքաշել հայտնի քաղաքական գործիչներին: Կաշառքը, իր հերթին, կարող է խաթարել պետության ղեկավարության դրական կերպարը: Հարկավոր է առատաձեռն լինել թշնամու ճամբարում տեղեկություններ կորզելու և հանցակիցներին կաշառելու հարցում, քանի որ դա հնարավորություն կտա հաղթելու նրան առանց ավանդական զենք օգտագործելու: Հանուն հաղթանակի պետք է նաև ամեն կերպ մի-

sotsialnyy-kontrol-upravlenie-soznaniem-i-instrument-globalnogo-dominirovaniya-chast-1/viewer):

* Ռուսաստանյան տերմինաբանությունում կիրառվում է *տեղեկութահոգեբանական պատերազմ (информационно-психологическая война)* տերմինը, իսկ արևմտյանում՝ *հոգեբանական (psychological warfare):* Ուստի հոդվածի խորհրդային հատվածում գործածվել է առաջին տարբերակը, ամերիկյանում՝ երկրորդ:

[3] Տես *Սուն Ցզի,* Երկ ռազմարվեստի մասին: Թարգմանությունը ռուսերենից՝ Ռ. Օ. Սահակյանի: Ե., 2006, էջ 15:

ջամտել իշխանության գործունեությանը և արժեզրկել թշնամու ավանդույթներն ու հավատը:

Ժամանակակից գիտական աշխարհում տարբեր տեսաբաններ և հետազոտողներ տարբեր կերպ են սահմանում «տեղեկութահոգեբանական (հոգեբանական) պատերազմ» հասկացությունը՝ շեշտելով այս երևույթի տարբեր կողմերը: Ամերիկացի հետախույզ Փոլ Լայնբարջերը առաջինն էր, որ 1948 թ. իր «Հոգեբանական պատերազմ» մենագրությունում տվեց «հոգեբանական պատերազմ» հասկացության ձևակերպումը: Նրա սահմանմամբ՝ հոգեբանական պատերազմը լայն իմաստով ընդգրկում է հոգեբանական գիտելիքների կիրառումը ռազմական գործում, իսկ նեղ իմաստով՝ քարոզչության օգտագործումը զինված հակամարտություններում, երբ ռազմական գործողությունները լրացվում են քարոզչական ջանքերով[4]:

Այսօր հոգեբանական և քաղաքագիտական ոլորտի գիտական հրապարակումներում ներկայացված են «հոգեբանական պատերազմ» հասկացության մի շարք սահմանումներ: Լայն իմաստով՝ հոգեբանական պատերազմը քաղաքական կամ ռազմական առավելություններ ստանալու նպատակով ձեռնարկվող տարբեր ձևերի և մեթոդների հոգեբանական ազդեցությունների համախումբ է: Հոգեբանական պատերազմում շեշտը դրվում է ոչ թե փաստարկների ու փաստերի, այլ ոչ դատողական բաղադրիչի վրա, որը ներառում է բնազդները, հույզերը և նախապաշարմունքները, որոնք խեղում են մարդու տրամաբանությունը:

Որպես տեղեկութահոգեբանական պատերազմի վառ օրինակ դիտարկենք Խորհրդային Միության և ԱՄՆ-ի ռազմական գործողությունները Աֆղանստանում: Աֆղանստան կատարված խորհրդային և ամերիկյան ներխուժումները պայմանավորված էին տարբեր պատմական հանգամանքներով, սակայն երկուսն էլ արտահայտում էին գերտերությունների ձգտումը՝ պահպանելու ռազմաքաղաքական վերահսկողությունը ռազմավարական դիրք ունեցող այս պետությունում: 1979 թ. ԽՍՀՄ-ը ներխուժեց Աֆղանստան՝ նպատակ ունենալով պաշտպանել կոմունիստական վարչակարգը, կանխել իսլամական հեղափոխության տարածումը իր հարավային սահմանների մոտակայքում: 2001 թ. ԱՄՆ-ը ներխուժեց Աֆղանստան՝ ի պատասխան սեպտեմբերի 11-ի ահաբեկչական հարձակումների՝ նպատակ ունենալով ոչնչացնել «Ալ Քաիդա»-ի ցանցը և տապալել Թալիբանի վարչակարգը, որն ապաստան էր տվել ահաբեկիչներին:

Խորհրդային ներխուժումն Աֆղանստան (1979–1989 **թթ**.)

Աֆղանստանում խորհրդային ներխուժումն[*] ուղեկցվում էր ակտիվ տեղեկութահոգեբանական պատերազմով, որը վարում էին և՛ խորհրդային կող-

[4] Տես *П. Лайнбарджер.* Психологическая война. Перевод с английского. Под ред. Н. Н. Берникова. М., 1962, с. 46:

[*] Թեև տվյալ ձեռնարկման համար հիմք դարձավ այդ ժամանակվա Աֆղանստանի Ժողովրդավարական Հանրապետության ձախ արմատական կառավարության դիմումը ԽՍՀՄ-ին՝ քաղացացիական պատերազմում աջակցելու համար, սակայն գորբաչևյան

մը, և՛ մոջահեդները[*]՝ արևմտյան պետությունների աջակցությամբ: Այդ պատերազմը ներառում էր քարոզչություն, ահաբեկում՝ ապատեղեկույթի միջոցով, բնակչության հավաքագրում՝ կրոնական գաղափարների օգտագործմամբ:

Խորհրդային քարոզչական մեքենան ներխուժումը ներկայացնում էր որպես «բարեկամական օգնություն»՝ ընդդեմ իսլամիստական զինյալների:

Քարոզչության հիմնական նպատակներն էին.

1. սոցիալիստական գաղափարների տարածումը՝ Աֆղանստանը խորհրդային մոդելի երկիր դարձնելու համար,

2. մոջահեդների դիմադրության թուլացումը և նրանց՝ որպես «հետադիմական ուժերի» ներկայացումը,

3. աֆղան ժողովրդի շրջանում ներխուժման նկատմամբ լոյալության ձևավորումը՝ խորհրդային զորքերը «միջազգային օգնության» ուժեր ներկայացնելու միջոցով,

4. ԽՍՀՄ-ի ներսում պատերազմի արդարացումը՝ Աֆղանստանում խորհրդային միջամտությունը որպես անհրաժեշտություն ներկայացնելու միջոցով[5]:

Սույն նպատակներին հասնելու համար խորհրդային քարոզչական մեքենան ձեռնարկել էր մի շարք միջոցառումներ: Ակտիվ քարոզչություն վարելու համար խորհրդային իշխանություններն Աֆղանստանում հիմնել էին ռադիոկայաններ, որոնք հեռարձակում էին տեղի փուշտու և դարի լեզուներով: Այս հաղորդումներում նրանք փորձում էին շեշտել խորհրդային օգնությունը, պատմում սոցիալիզմի ձեռքբերումների մասին, ինչպես նաև մոջահեդներին անվանում ամերիկյան գործակալներ: Նրանք քարոզչության մեջ հատկապես հաջող կերպով օգտագործեցին կինոարվեստը: Խորհրդային ագիտատորների համար կինոն ընդամենը «խայծ» էր, իսկ գլխավոր խնդիրը հանդիսատեսին գաղափարական ու տեղեկատվական ուղերձներ հասցնելն էր: Հենց կինոքարոզչությունն էր, որ դարձավ ԽՍՀՄ տեղեկատվական գործողությունների թերևս ամենահաջող տարրը[6]:

Բացի այդ, ԽՍՀՄ ռազմաքաղաքական ղեկավարությունը թռուցիկների, գրքույկների, պաստառների միջոցով վարել է լայնածավալ տպագիր քարոզ-

---

շրջանում ընդունված էր համարել, որ դա արվել էր ԽՍՀՄ ղեկավարության թելադրանքով (տես, օրինակ, «Война в Афганистане: 1979- 1989». «РМИ», 15.11.2023 (https://myhistorypark.ru/media/afganskaya-vojna/#)): - *Խմբ.:*

[*] Մոջահեդներն իսլամի պաշտպանությանն ուղղված սրբազան պատերազմի մարտիկներն են, որոնց հաճախ հիշատակում են զինված հակամարտությունների համատեքստում:

[5] Տես *Հ. Գ. Ֆոգել*. Особенности пропаганды СССР во время военной акции в Афганистане (1979–1989 гг.) (https://psyfactor.org/lib/propaganda51.htm?ysclid=mamiy94xaw778661098); *Ե. Հ. Սենյավսկայա.* Психология войны в XX веке: исторический опыт России. М., 1999; (https://iriran. ru/sites/default/files/Senyavskaya_E.S._Psyhologiya voini v XX veke(1999)_text.pdf); նաև՝ *Վ. Գ. Կրիսկո.* Секреты психологической войны (цели, задачи, методы, формы, опыт). Минск, 1999:

[6] Տես *Ա. Գ. Կրիսկո,* Նշ. աշխ., էջ 193- 195:

չություն, որտեղ խոսվել է սոցիալիզմի առավելությունների մասին: Այս ամենը, որպես կանոն, ուղեկցվում էր նյութական և բժշկական օգնության տրամադրմամբ[7]:

Բավական լուրջ աշխատանքներ էին տարվում գյուղերի ու քաղաքների բնակչության գաղափարական վերահսկողության համար: Խորհրդային զորքերը և Աֆղանստանի կառավարությունը փորձում էին ամրապնդել սոցիալիստական գաղափարները գյուղական շրջաններում՝ ստեղծելով կոմունիստական կուսակցության բջիջներ:

Խորհրդային Միությունը, հասկանալով, որ իսլամը մոջահեդների գաղափարական դիմադրության հիմքն է, փորձեց օգտագործել կրոնական քարոզչությունը՝ սոցիալիզմը ներկայացնելով որպես իսլամին համապատասխանող գաղափարական համակարգ: Այս մոտեցման հիմնական նպատակը մոջահեդների գաղափարական հիմքերի թուլացումն էր և աֆղանների շրջանում խորհրդային իշխանության լեգիտիմության ամրապնդումը: Այդ նպատակին հասնելու համար համապատասխան մեկնաբանություններով Ղուրանից՝ տարածվում էին պատառիկներ սոցիալական արդարության, աշխատավորների իրավունքների և հարստության հավասար բաշխման մասին գաղափարների շեշտադրմամբ: Օրինակ՝ «Ով հավատացյալներ, շատ կրոնական առաջնորդներ և քարոզիչներ ապօրինաբար վերցնում են ժողովրդի փողերը և վանում Աստծո ճանապարհից: Նրանք, ովքեր կուտակում են ոսկին և արծաթը և չեն ծախսում դրանք ԱՍՏԾՈ գործի համար, խոստացեք նրանց ցավալի հատուցում» (Ղուրան 9:34)[8]: Սա ներկայացվում էր որպես ապացույց, որ իսլամը դեմ է կապիտալիզմին և խրախուսում է սոցիալիստական սկզբունքներ:

Բացի այդ, նրանք նաև «սև գույներով» էին ներկայացնում մոջահեդներին և նրանց վարած կրոնական քարոզչությունը՝ նրանց ներկայացնելով որպես կրոնական մոլեռանդների, որոնք խախտում են իսլամի իրական սկզբունքները:

Սակայն խորհրդային այս մոտեցումը ձախողվեց, քանի որ աֆղանական հասարակությունն ավանդապաշտ էր, և խորհրդային քարոզչությունն ընկալվում էր որպես կրոնական հարցերին արտաքին միջամտություն, իսկ մոջահեդները ավելի հաջող քարոզչություն էին վարում՝ խորհրդային ներխուժումը ներկայացնելով որպես անհավատների հարձակում իսլամի վրա[9]: Սա ապացուցում է, որ չնայած խորհրդային քարոզչության ջանքերին՝ մոջահեդները հաղթեցին գաղափարական պատերազմում, քանի որ իսլամը շարունակում էր մնալ աֆղանների ինքնության հիմքը, և նրանք չընդունեցին խորհրդային մեկնաբանությունները:

---

[7] Տես նույն տեղում:

[8] Տես «Իմ ագահությունը: Արդյո՞ք ամեն ինչ ինձ է պատկանում» (https://hy.universalgodmessageofpeace.org/about-1-1):

[9] Տես *Т. В. Рабуш.* Джихад и пропаганда в афганском вооруженном конфликте (1979–1989 гг.). «Исламоведение», 2016, Т. 7, № 3:

Խորհրդային զորքերը միտումնավոր կերպով ապատեղեկույթ էին տարածում՝ նպատակ ունենալով խուճապ ու անվստահություն ստեղծել ապստամբների շրջանում, մոլորեցնել նրանց խորհրդային բանակի ծրագրերի վերաբերյալ, թուլացնել հակառակորդի միասնականությունը և խաթարել նրա կառավարումը: Միևնույն ժամանակ, այս կերպ նրանք փորձում էին ստիպել հակառակորդին անիմաստ կերպով ծախսել իր ռեսուրսներն ու ուժերը կեղծ թիրախների դեմ պայքար մղելու համար[10]:

Խորհրդային հետախուզական ծառայությունները պարբերաբար լուրեր էին տարածում մոտալուտ լայնածավալ հարձակումների մասին այն տարածքներում, որտեղ իրական հարձակումներ չէին նախատեսվում՝ այդ նպատակով կաշառելով մոջահեդների համար վստահելի տեղեկատուներին: Հենց դրա համար էլ ստեղծվեցին այսպես կոչված «կեղծ խմբավորումներ», որոնք մոջահեդների ջոկատներին իրար դեմ էին հանում[11]:

Գաղափարական աշխատանքներ էին ձեռնարկվում նաև խորհրդային զորքերի շրջանում. պատերազմի գաղափարական արդարացում՝ որպես միջազգային օգնություն եղբայրական աֆղան ժողովրդին: Սակայն շատ զինվորներ աստիճանաբար կորցնում էին հավատը պաշտոնական քարոզչության նկատմամբ, քանի որ տեսնում էին պատերազմի դաժանությունը և աֆղանների հակակրանքը խորհրդային ուժերի հանդեպ:

Աֆղանական խմբավորումները ևս վարում էին հոգեբանական օպերացիաներ: Մշտապես օգտագործելով պարտիզանական պատերազմի մեթոդները՝ մոջահեդները ԽՍՀՄ-ի դեմ կիրառում էին խուճապ առաջացնող հարվածներ, դարանակալումներ և կայծակնային հարձակման եղանակներ[12]: Խորհրդային զինվորները չէին կարողանում հարմարվել դաժան լեռնային պայմաններին, իսկ մոջահեդները թաքնվում էին քարանձավներում, օգտվում էին տեղական բնակչության աջակցությունից և գործում էին տարաշարժուն խմբերով: Նրանք իրենց պայքարը ներկայացնում էին որպես ջիհադ, ինչը նրանց հնարավորություն տվեց աֆղանական հասարակությունը համախմբելու ԽՍՀՄ-ի դեմ[13]: Չնայած խորհրդային իշխանությունները փորձեցին ներխուժումը ներկայացնել որպես առաջադիմական սոցիալիստական գաղափարների տարածում, սակայն իսլամական ավանդույթներին խորապես հավատացող աֆղանները դա մերժեցին:

---

[10] Տես *А. А. Ляховский.* Трагедия и доблесть Афгана. М., 1995, с. 373 (https://psv4.userapi.com/s/v1/d/0cckLG7mU7YXsvcSFOwwRjAo6BCLj4Tn-FgIz8-CoqxUMTAU7Fc4Sxdkvx9mBcF4J_xyptF54sdIxcTID54rNvc2QEXi4TJyCtAwWWZnrVoGyWbN/A_Lyakhovskiy_Tragedia_i_doblest_Afgana.pdf):

[11] Տես *Д. Гай, В. Снегирев.* Вторжение. Неизвестные страницы необъявленной войны. М., 1991 с. 136 (https://psv4.userapi.com/s/v1/d/5XKg_DJXmiW8ePbOp0cUlQeZ4VIeRc5FaLMo3ocXrTsz1wVpkHFpog6ZKHYt5gyEseTZHodr_h3GcNGRIOsEAtmI4BaoYrkgDk5LZ6uQNUCYo4xV/Gay_D_Snegiryov_V_-_Vtorzhenie_-_1991.pdf):

[12] Այդ մասին ավելի հանգամանորեն տես *Հ. Ս. Քոթանջյան,* Մոջահեդի բարոյահոգեբանական արժեքային կողմնորոշումների հարցի շուրջ: «ՀԲ», 1996, հմ. 1:

[13] Այդ մասին ավելի հանգամանորեն տես նույն տեղում:

Խորհրդային քարոզչության ձախողումը պայմանավորված էր մի շարք հանգամանքներով.

1. մոջահեդները հաջողությամբ օգտագործում էին իսլամական հավատը որպես հզոր գաղափարական զենք,

2. աֆղանական հասարակությունը չէր ընդունում կոմունիզմը, քանի որ այն համարվում էր «անհավատների գաղափար»,

3. խորհրդային քարոզչությունը կտրված էր աֆղանական իրականությունից՝ գյուղացիները և մոջահեդները չէին վստահում դրան,

4. և ի վերջո՝ ռազմական գործողությունները և քաղաքացիական կորուստները ամբողջությամբ ոչնչացրեցին «ԽՍՀՄ բարեկամական առաքելության» պատկերը:

Աֆղանստանում կրած ձախողումների պատճառների շարքում կարևոր դեր խաղաց հակառակորդի առանձնահատկությունների, ազգային-ազատագրական պայքարի վարման ավանդական և ժամանակակից եղանակների համադրման հմտության ուսումնասիրության նկատմամբ առանձին խորհրդային քաղաքական և ռազմական գործիչների գոռոզամիտ արհամարհանքը[14]:

ԱՄՆ-ի ներխուժումն Աֆղանստան (2001–2021 **թթ**.)

2001 թվականից ԱՄՆ-ը և նրա դաշնակիցները այս տարածաշրջանում ընթացող ռազմական գործողությունները զուգակցեցին հոգեբանական պատերազմով: Աֆղանստանում նրանք կիրառեցին հոգեբանական և տեղեկատվական պատերազմի բարդ համակարգ, ինչի նպատակն էր հասարակական տրամադրությունների կառավարումը, հակառակորդի բարոյալքումը և ամերիկյան ազդեցության ամրապնդումը: Եթե Խորհրդային Միությունը փորձում էր սոցիալիզմի գաղափարախոսությունը արտահանել Աֆղանստան, ապա ԱՄՆ-ի քարոզչությունը կառուցված էր ժողովրդավարության, ազատության ու մարդու իրավունքների գովազդման վրա:

ԱՄՆ-ը հոգեբանական պատերազմն Աֆղանստանում վարում էր մի քանի ուղղություններով: Առաջին հերթին նա փորձում էր դաշնակիցներ ձեռք բերել աֆղանների շրջանում: Դրա նպատակն էր Աֆղանստանում ստեղծել նոր կառավարող վերնախավ, որը կլիներ արևմտամետ և հավատարիմ ամերիկյան քաղաքականությանը, ինչի համար ԱՄՆ-ը միլիոնավոր դոլարներ ներդրեց նոր աֆղանական պետության կառուցման գործում՝ փորձելով ձևավորել արևմտամետ ղեկավարություն, որը կկարողանար երկարաժամկետ հեռանկարում ղեկավարել պետությունը[15]: Աֆղան պաշտոնյաները, նախարարները և նույնիսկ որոշ ռազմական հրամանատարներ ուղարկվում էին ԱՄՆ ու Եվրոպա՝ սովորելու ժողովրդավարական կառավարում, քարոզչության տեխնոլոգիաներ և զինված ուժերի կառավարման մոդելներ: Բացի

[14] Տես նույն տեղում:

[15] Տես *А. А. Сушенцов.* Малые войны США: политическая стратегия США в конфликтах в Афганистане и Ираке в 2000–2010-х годах. М., 2014, сс. 121- 123:

այդ, ԱՄՆ-ի աջակցությամբ հիմնվեցին քաղաքական և ռազմական ակադեմիաներ, որտեղ ուսուցանվում էին ԱՄՆ-ի կառավարական համակարգի տարրերը, տնտեսության կառավարման մոդելները և արևմտյան արժեքները: Սակայն աֆղանական հասարակությունը մեծ մասամբ չընդունեց այս վերնախավին, քանի որ այն համարվում էր ԱՄՆ-ի դրածո, որը կտրված էր աֆղանական իրականությունից:

ԱՄՆ-ն իր քարոզչական ռազմավարությունը կառուցել էր մի քանի առանցքային ուղղություններով՝ աֆղանական բանակի և ոստիկանության շրջանում ձևավորել ամերիկացիների նկատմամբ վստահություն, վարկաբեկել Թալիբան շարժումը, աֆղան ժողովրդին համոզել, որ կառավարության և ԱՄՆ-ի աջակցությունը լեգիտիմ է, խրախուսել համագործակցությունը տեղական առաջնորդների, ռազմական և հասարակական դերակատարների հետ[16]: Դրա համար ձևավորվեցին աֆղան զինվորներին և սպաներին դաշնակից դարձնելու քարոզչական մեխանիզմներ: Նրանց տրվում էր արևմտյան ոճի ռազմական կրթություն (ԱՄՆ-ի հրահանգիչները սովորեցնում էին առաջադիմական ռազմական տեխնոլոգիաներ, մարտավարություն, հակահետախուզություն, հոգեբանական պատերազմի մեթոդներ և այլն): Շեշտադրվում էր նաև սոցիալական ապահովության հարցը. զինվորների շրջանում ստեղծվում էր պատկերացում, թե ԱՄՆ-ի հովանավորյալ բանակի զինծառայողը սոցիալապես ավելի ապահով է, ավելի բարձր է վարձատրվում և ավելի բարեկեցիկ կյանք է վարում, քան թալիբների բանակում ծառայողը: Սակայն այս գործիքակազմը ևս չաշխատեց, քանի որ ԱՄՆ-ը հաշվի չէր առել հակառակորդի ռազմական մշակույթի առանձնահատկությունները, մասնավորապես՝ աֆղան զինվորների մի զգալի մասը հավատարիմ էր ոչ թե պետությանը, այլ իրենց ցեղերին և տեղական առաջնորդներին:

Հաջորդ թիրախը հասարակ աֆղան ժողովուրդն էր: Ամերիկացիներն սկսեցին արևմտյան արժեքներ տարածել աֆղան ժողովրդի շրջանում՝ նրա մտքի, ընկալման և հասարակական նոր արժեքների ձևավորման վրա ազդելու համար: Այդ նպատակով ստեղծվեցին ամերիկամետ ալիքներ, օրինակ՝ «Ազատություն» ռադիոկայանը, որն առաջ էր մղում ԱՄՆ-ի քաղաքականությունը, քննադատում էր թալիբներին և քարոզում ժողովրդավարություն: Արևմտամետ տրամադրություններ ձևավորելու, աֆղանական հասարակությունում իր ազդեցությունն ամրապնդելու համար ԱՄՆ-ը ակտիվորեն օգտագործեց հանրային դիվանագիտության գործիքները՝ կենտրոնանալով սոցիալական ցանցերի զարգացման, ամերիկյան տիպի համալսարանական կրթությանն աջակցության, կինոյի և հեռուստատեսության վրա[17]: Ակտի-

[16] Տես *Arturo Munoz.* U.S. Military Information Operations in Afghanistan: Effectiveness of Psychological Operations 2001–2010. “RAND”, 30 April 2012, P. 32 (https://www.rand.org/pubs/monographs/MG1060.html):

[17] Տես *Н. А. Цветкова, А. Н. Сытник.* Публичная дипломатия в Афганистане, 2002–2018 гг.: влияние США на социальные сети, политическую систему и университеты. «Вестник СПбГУ. Международные отношения», 2018, Т. 11, Вып. 4 (https://cyberleninka.ru/article/n/publichnaya-diplomatiya-v-afganistane-2002-

վորեն վարվում էր կանանց իրավունքների պաշտպանության քարոզչություն՝ թալիբների ճնշումների շեշտադրմամբ[18]: Այս գործողությունները ևս ձախողվեցին՝ արևմտյան արժեքները խորապես չարմատավորվեցին, քանի որ աֆղանական հասարակությունը մշակութային ու կրոնական առումով պահպանողական էր:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Աֆղանստանը մի պետություն է, որտեղ ցեղային համակարգը շարունակում է պահպանել իր նշանակությունը հասարակության կառավարման և սոցիալական հարաբերությունների մեջ, ԱՄՆ-ը փորձում էր ձեռք բերել ցեղապետերի հավատարմությունը՝ նրանց առաջարկելով ֆինանսավորում, զենք, ենթակառուցվածքներ: Չնայած աֆղան ցեղապետերն ընդունում էին ամերիկյան գումարները, բայց իրականում շարունակում էին համագործակցել Թալիբանի հետ, քանի որ վերջիններս ավելի մոտ էին իրենց մշակույթին ու հավատքին[19]:

ԱՄՆ-ի վարած հոգեբանական պատերազմին հակազդելու նպատակով թալիբները ևս դիմեցին հոգեբանական գործողությունների՝ մշակելով իրենց հակաքարոզչական մեխանիզմները, որոնք հիմնված էին իսլամական գաղափարախոսության, տեղական ավանդույթների և տեղեկատվական դաշտի վերահսկման վրա: Թալիբները պնդում էին, որ արևմտյան քարոզչությունը կեղծ է, շահարկող ու հակաիսլամական և որ ԱՄՆ-ը չի հետաքրքրվում աֆղանների իրավունքներով, այլ պարզապես օգտագործում է ժողովրդավարության կարգախոսը իրենց երկիրը զավթելու համար: Նրանք ամերիկյան քարոզչությունը ներկայացնում էին որպես կրոնական պատերազմ՝ պնդելով, որ ԱՄՆ-ը ոչ թե փորձում է օգնել, այլ պատերազմում է իսլամի դեմ, ինչը մեծ արձագանք ստացավ աֆղանների հոգում[20]:

Ամերիկյան քարոզչությանը հակազդելու համար թալիբներն իրենց ձեռքը վերցրեցին նաև լրատվական դաշտի վերահսկողությունը՝ ոչ միայն զավթելով ամերիկացիների կառավարած և ֆինանսավորած լրատվամիջոցները, այլև ստեղծելով իրենց ընդհատակյա լրատվական ցանցերը, որոնց միջոցով տարածում էին այն գաղափարը, թե աֆղանական ոգին չճանաչող ԱՄՆ-ը երբեք չի կարող հաղթել: Բացի այդ, նրանք իրենց վերահսկողության տակ գտնվող տարածքներում սահմանափակում էին համացանցն ու հեռուստատեսությունը:

Բավական լուրջ աշխատանքներ էին տարվում նաև կրոնական դաշտում: Թեև ԱՄՆ-ը փորձում էր օգտագործել Ղուրանի որոշ հատվածներ,

2018-gg-vliyanie-ssha-na-sotsialnye-seti-politicheskuyu-sistemu-i-universitety/viewer):

[18] Տես *Belén Fernández.* Women's rights and the US's 'civilising' mission in Afghanistan. "AlJazeera", 21 August 2021 (https://www.aljazeera.com/opinions/2021/8/21/white-women-washing-the-uss-civilising-mission-in-afghanistan?utm_source=chatgpt.com):

[19] Տես *Ա. Ա. Սուշենցով,* Նշ. աշխ., էջ 116:

[20] Տես *Anne Stenersen.* The Taliban insurgency in Afghanistan – organization, leadership and worldview. FFI-rapport 2010/00359, 5 February 2010, P. 49 (https://www.researchgate.net/publication/267995566_The_Taliban_insurgency_in_Afghanistan_-_organization_leadership_and_worldview):

որպեսզի ցույց տա, որ Թալիբանի քարոզած արմատական իսլամը սխալ է[21], թալիբները հակադարձում էին դրան՝ ակտիվորեն տարածելով Ղուրանից «ջիհադի»[22] վերաբերյալ հատվածներ, որոնցում խոսվում էր «անհավատների դեմ պայքարի» մասին՝ ԱՄՆ-ի ներկայությունը կոչելով խաչակրաց արշավանք:

Այս ամենից զատ նրանք վախի մթնոլորտ էին ստեղծում ամերիկյան զորքերի շրջանում՝ լուրեր տարածելով, թե ամերիկացիները լիարժեք կերպով չեն վերահսկում տարածքը, ամերիկյան զորքերի ղեկավարները դավաճանում են զինվորներին, ինչն ազդում էր նրանց բարոյահոգեբանական վիճակի և մարտունակության վրա: Ի պատասխան՝ ԱՄՆ-ի քարոզչությամբ հաճախ փորձ էր արվում վարկաբեկելու թալիբներին՝ նրանց ներկայացնելով որպես դաժան մարդասպանների, տարածելով անմեղ մարդկանց գնդակահարության լուսանկարներ ու տեսանյութեր: Սակայն սա ևս էական արդյունք չապահովեց, քանի որ թալիբներն արագորեն արձագանքում էին իրենց հակաքարոզչական ցանցերի միջոցով:

Ամփոփելով՝ վստահաբար կարող ենք ասել, որ ԱՄՆ-ի քարոզչական մեքենան անհամեմատ հզոր էր Խորհրդային Միության քարոզչությունից, քանի որ օգտագործում էր տվյալ ժամանակաշրջանին հատուկ լրատվամիջոցներ, սոցիալական ցանցեր և հոգեբանական ներգործության գործիքներ: Սակայն երկու դեպքում էլ աֆղանները հաղթեցին հոգեբանատեղեկատվական պատերազմում, քանի որ.

1. նրանց գաղափարախոսությունն ամուր էր արմատավորված իսլամական հասարակության մեջ,
2. նրանք օգտվում էին ավանդական քարոզչական մեթոդներից (մզկիթներ, խոսակցություններ, տեղական առաջնորդների զրույցներ),
3. նրանք ավելորդ խոստումներ չէին տալիս՝ ի տարբերություն ԱՄՆ-ից, որը խոստանում էր կայունություն, բայց չկարողացավ ապահովել այն:

Ե՛վ ԽՍՀՄ, և՛ ԱՄՆ-ի ամենամեծ ձախողումն այն էր, որ նրանք այդպես էլ չկարողացան այլընտրանքային ազգային գաղափարախոսությամբ փոխարինել, մի դեպքում, մոջահեդների, մյուս դեպքում՝ թալիբների գաղափարախոսությունները:

Եզրակացություններ և առաջարկություններ

Այսպիսով՝ Աֆղանստանում ծավալված տեղեկութահոգեբանական պատերազմների փորձը ցույց է տալիս, որ տեղեկատվական և գաղափարական պատերազմները կարող են լինել ոչ պակաս վճռորոշ, քան բուն ռազմական

[21] Տես *Thomas H. Johnson.* The Taliban Insurgency and an Analysis of Shabnamah (Night Letters). “Small Wars and Insurgencies”, 2007, Vol. 18, N 3 (https://www.researchgate.net/publication/228375522_The_Taliban_Insurgency_and_an_ Analysis_of_Shabnamah_Night_Letters):

[22] «Ջիհադի» մասին ավելի հանգամանորեն տես *Հ. Ս. Քոթանջյան,* Սրբազան պատերազմի ազգաքաղաքականությունը Աֆղանստանի օրինակով: «ՀԲ», 1995, հմ. 4:

գործողությունները: Հայաստանի Հանրապետության համար այս փորձը կարևոր է ինչպես ազգային անվտանգության ռազմավարության մշակման, այնպես էլ Զինված ուժերի հոգեբանական պատրաստության աստիճանի բարձրացման տեսանկյունից:

Ուստի, մեր կարծիքով, անհրաժեշտ է տեղեկատվական անվտանգության և հոգեբանական պաշտպանության ամրապնդման համար մշակել և կենսագործել հետևյալ քայլերը.

- զարգացնել մեդիագրագիտությունը և ուժեղացնել բնակչության քննադատական վերաբերմունքը կեղծ լուրերի և քարոզչության նկատմամբ,
- ստեղծել հատուկ վերլուծական կենտրոններ, որոնք կմշակեն մեխանիզմներ տեղեկատվական սպառնալիքների կանխատեսման, հայտնաբերման և արձագանքման արդյունավետ ռազմավարության մշակման համար,
- ապահովել ազգային ինքնության, լեզվի և մշակութային արժեքների՝ որպես հոգեբանական պատերազմին դիմակայելու հիմնական գործիքների պահպանումը,
- ներդրել ժամանակակից տեխնոլոգիաներ տեղեկատվահոգեբանական պատերազմներին արդյունավետ կերպով հակազդելու համար,
- վարել շարունակական և կանխարգելիչ հոգեբանական պայքար՝ ոչ միայն հակազդական, այլև նախաձեռնողական:

Սույն առաջարկությունների իրագործումը, մեր կարծիքով, հնարավորություն կտա ուժեղացնելու Հայաստանի Հանրապետության ԶՈՒ-ի և հասարակության տեղեկատվական ու հոգեբանական կայունությունն ու անվտանգությունը՝ նվազեցնելով արտաքին հոգեբանատեղեկատվական սպառնալիքների ազդեցությունը:

ИНФОРМАЦИОННО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ВОЙНЫ

АНАЛИЗ ИНФОРМАЦИОННО-ПСИХОЛОГИЧЕСКОЙ ВОЙНЫ СССР И США В АФГАНИСТАНЕ

Н. Б. ЕНИКОЛОПОВА, майор запаса, ученый-аналитик Центра исследований истории военного искусства НИУО МО РА; Р. А. ГАСПАРЯН, ученый-аналитик Центра исследований истории военного искусства НИУО МО РА

РЕЗЮМЕ

В последнее время на международной арене все чаще реализуются элементы информационно-психологических войн (ИПВ), в связи с чем они представляют значительный исследовательский интерес. В данной статье анализируется опыт ИПВ, проводимой в контексте военных кампаний СССР и США в Афганистане. Обе державы стремились посредством информационно-пропагандистских инструментов

повлиять на морально-психологическое состояние афганцев и сформировать благоприятное восприятие своего присутствия среди местного населения. Однако в обоих случаях результаты оказались далекими от ожидаемых.

В ходе ввода ограниченного контингента советских войск в ДРА активно использовались агитационные листовки, радиопередачи, кинопродукция и иные формы пропаганды, направленные на формирование образа Советского Союза как союзника афганского народа и защитника его интересов. Однако данная стратегия потерпела неудачу из-за игнорирования культурных, религиозных и социальных реалий афганского общества.

После вторжения коалиционных сил в Афганистан в 2001 году США активно использовали психологические операции, направленные на разрушение морального духа талибов и формирование симпатий среди афганского населения. Однако несмотря на значительные усилия в области информационного воздействия, эти операции также не принесли долгосрочного успеха вследствие недооценки цивилизационно-культурных и психологических особенностей афганцев.

Таким образом, применение ИПВ в рамках советской и американской военных операций в Афганистане показывает, что для достижения успеха в информационных операциях необходимо не только наличие ресурсов и технологий, но и глубокое понимание культурных, религиозных и социально-психологических особенностей противника. В противном случае даже самые высокотехнологичные и ресурсоемкие усилия могут оказаться неэффективными.

PSYCHOLOGICAL WARFARE

ANALYSIS OF THE PSYCHOLOGICAL WARFARE WAGED BY THE USSR AND THE USA IN AFGHANISTAN

N. B. YENIKOLOPOVA, Major (Res.), Research Fellow, Center for Research on the History of Military Art, NDRU, MOD, RA; R. H. GASPARYAN, Research Fellow, Center for Research on the History of Military Art, NDRU, MOD, RA

SUMMARY

Elements of psychological warfare (PW) have recently been gradually implemented in the international arena, hence being a significant matter of interest for research. This article discusses the experience of PW waged in the framework of the military campaigns run by the USSR and the USA in Afghanistan. Both powers, by way of information and propaganda tools, sought to affect the moral and psychological state of the Afghans, and to make for somewhat a favorable perception of their presence among the

local population. However, in both cases the outcomes were far from the anticipated.

At the time of the introduction of a limited contingent of Soviet troops into the DRA, propaganda leaflets, radio broadcasts, films, and other propaganda means were actively employed, with a focus on projecting the image of the Soviet Union as the Afghan people's ally and a defender of their interests. Nonetheless, said strategy failed since the cultural, religious, and social realities of the Afghan society were overlooked.

After the coalition forces invaded Afghanistan in 2001, the US actively practiced psychological operations targeted at demoralizing Taliban and generating sympathies among the Afghan population. However, notwithstanding the massive efforts in the realm of the information influence, those operations failed to yield prolonged success due to the consequence that the Afghans' civilizational and cultural, as well as psychological features were not reckoned with due measure.

Hence, the PW employment in the framework of the Soviet and US military operations in Afghanistan demonstrates that in order to succeed in information operations the availability of resources and technologies does not go around. A profound knowledge of the enemy's cultural, religious, and social characteristics is a must. Otherwise, even the best hi-tech and resource-intensive technologies might prove ineffective.